

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձրադվածություն


Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2003թ. հունվար-նոյեմբերին, ըստ գնահատման, կազմել է 1238.1 հազ. մարդ, որի 89.9%-ը կամ 1112.8 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 10.1%-ը կամ 125.3 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Ըստ գնահատման, 2003 թ. հունվար-սեպտեմբերի դրությամբ, զբաղված բնակչության 75.8%-ը զբաղված է եղել մասնավոր հատվածում, 23.8%-ը՝ պետական հատվածում և կառավարման համակարգում (որից 60%-ը տնտեսության բյուջետային հատվածում), իսկ 0.4%-ը՝ հասարակական կազմակերպություններում և հիմնադրամներում:

2003թ. նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 149.6 հազ. աշխատանք փնտրողներից 99.0%-ը կամ 148.1 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 81.0%-ը կամ 120.0 հազ.մարդ: Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել 7.0 հազ.մարդ, նրանցից՝ կանայք՝ 52.4%:

2003թ. նոյեմբերին վերոհիշյալ գործակալության կողմից հաշվառման վերցված 1.2 հազ. չզբաղվածներից 0.8 հազարը կամ 66.7%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 2.1 հազ. աշխատանք փնտրողներ, նրանցից 0.7 հազարը կամ 33.3%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Պաշտոնապես գրանցված գործազուրկների շարժն ըստ ամիսների 2002-2003թթ.¹




¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի¹, 2003թ. նոյեմբերին

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		նրանցից՝ չգրադավածներ		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2002թ. նոյեմբերի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2002թ. նոյեմբերի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2002թ. նոյեմբերի նկատմամբ, %
ք.Երևան	34.5	91.5	34.3	91.5	30.6	89.2
Արագածոտն	2.3	104.5	2.1	105.0	1.4	93.3
Արարատ	5.6	86.2	5.4	84.4	4.2	82.4
Արմավիր	8.2	96.5	8.2	97.6	5.4	91.5
Գեղարքունիք	8.5	98.8	8.3	97.6	6.1	96.8
Լոռի	27.0	105.1	26.8	105.1	21.8	101.9
Կոտայք	8.0	84.2	7.9	84.0	5.9	81.9
Շիրակ	31.4	94.9	31.3	94.8	25.7	91.5
Սյունիք	16.9	101.8	16.8	101.8	13.8	100.7
Վայոց ձոր	2.1	100.0	2.1	100.0	1.6	94.1
Տավուշ	5.2	106.1	4.9	104.3	3.5	94.6
Ընդամենը ՀՀ	149.7	96.3	148.1	96.2	120.0	93.1

Աշխատանք փնտրողների և աշխատանքի տեղավորվածների հարաբերակցությունն ըստ մարզերի 2003 թ. նոյեմբերի վերջին



Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 68.5%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2002թ. նոյեմբերի նկատմամբ աճել է 1.5%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2003թ. նոյեմբերի վերջին կազմել է 633 մարդ, այդ թվում՝ 79.3%-ը կամ 502-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 234 չգրադաված մարդ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 2.2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ 25.8%-ով:

2003թ. նոյեմբերին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվել են 701 մարդ, որոնց 52.5%-ը՝ կանայք:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2003թ. նոյեմբերին կազմել է 6.4 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3298 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն ստացել են 8.6 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1470 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկված որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2003թ. նոյեմբերին կազմել է 9.9% և 2003թ. հոկտեմբերի նկատմամբ նվազել է 0.1 տոկոսային կետով:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով: